ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Աշոտ Մանուկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Լոնդոն (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), 2018թ ապրիլի 9-ից 11-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հայաստանում և Վրաստանում Միացյալ Թագավորության առևտրի և ներդրումների հարցերով հանձնակատար

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Քննարկել էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրեր

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Ներկայացվել են էներգետիկայի ոլորտում մասնագիտական վերապատրաստման ուսումնական կենտրոնի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները, կենտրոնի ստեղծմանը բրիտանական կողմի մասնակցության հնարավոր ուղղությունները:
   Քննարկվել են նաև արևային և կուտակիչ կայանների կառուցման ներդրումային ծրագրերը, դրանցում բրիտանացի գործարարների ներգրավելու սկզբունքները:
   Մանրամասն անդրադարձել է կատարվել 14 ՄՎտ կուտակային հնարավորությամբ Հայաստանում առաջին կուտակիչ կայանի կառուցման պիլոտային ծրագրի իրականացման ընթացքին, էլեկտրաէներգիայի ներքին սպառման կառուցվածքում վերականգնվող էներգիայի տեսակար կշռի շարունակական ավելացման խնդիրներին:
   Անդրադարձ է կատարվել նաև զբոսաշրջության զարգացման բնագավառում համագործակցության ծրագրերի իրականացման հնարավորություններին:
   Քննարկվել են Հայաստան բրիտանացի գործարարների ու ներդրողների հունիսին նախատեսվող այցի հետ կապված կազմակերպական հարցեր, բրիտանացի ներդրողներին հետաքրքրող ներդրումային ծրագրեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Հանդիպում է կայացել Հայաստանում և Վրաստանում Միացյալ Թագավորության առևտրի և ներդրումների հարցերով հանձնակատար Մարկ Փրիթչարդի հետ:

Մարկ Փրիթչարդը կառուցողական է գնահատել հայկական կողմի հետ համագործակցությունը և վստահություն հայտնել, որ բրիտանացի գործարարների հունիսին կայանալիք այցը Հայաստան կլինի արդյունավետ և փոխշահավետ:

8. ՀԱՎԱՔԻ ԿԱՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԹՂԹԵՐԸ

Ձեռք են բերվել հստակ պայմանավորվածություններ բրիտանացի գործարարների Հայաստան կատարվելիք այցի ժամկետների և դրա նախապատրաստական աշխատանքերի համակարգման նպատակով իրականցվող քայլերի ժամանակցույցի և այցի հետ կապված քննարկումների հետագա ընթացքի վերաբերյալ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների
նախարարի պաշտոնակատար Ա.Մանուկյան